

Հարց Ո՞ր դեպքերում է Հանձնաժողովն իրավասու վերանայել ջրային ոլորտի սակագները:

Պատասխան Ջրային ոլորտ՝ որը ներառում է խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարումը, ջրահեռացումը և կեղտաջրերի մաքրումը: Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ կարող է վերանայել գործող սակագինը և սահմանել նոր սակագին՝ ելնելով ջրային ոլորտում գործունեության լիցենզիա ունեցող անձի տնտեսական գործունեության արդյունքներից, ներդրումային ծրագրերի և սպառողներին մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ ներկայացված պահանջների կատարումից: Սահմանված սակագինը կարող է վերանայվել ինչպես ջրային ոլորտում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից ներկայացված հայտի հիման վրա, այնպես էլ Հանձնաժողովի նախաձեռնությամբ: Սակագների գործողության ժամկետը 1 տարուց պակաս չի կարող լինել: Սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում որոշումն ընդունելուց 30 օր հետո: